

Հայաստանի Հանրապետություն

Ք.Երևան

«Ա.Ռ.Մ. ՇԻՆ» ՍՊԸ

Լիցենզիա 16029

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Աշտարակ, Երևանյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող Հայաստան „Սևան“ մարզական ՀԿ-ի մարզադպրոցի շենքի տեխնիկական վիճակի և նրա հետակա շահագործման հնարավորության վերաբերյալ:

Տնօրեն



Ռ.Իշխանյան

-2017թ-

«Ա.Ռ.Ս. ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Սարիթաղ 14փ., 26տ.
Հեռ.՝ (+374 10) 55-10-94,
(+374 94) 64-36-63

«Ա.Ռ.Ս. ՇԻՆ»
ՍՊԸ

«A.R.M. SHIN» LLC
Saritagh 14, 26house, Yerevan, RA
Հեռ.՝ (+374 10) 55-10-94,
(+374 94) 64-36-63

«A.P.M. ШИН» ООО, г. Ереван Саритах 14, дом 26

N_179/17__

«29_» «_08_» 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՆԿԱԿԵՆՏՐԱԼԻՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԻՅԵՆՋԻԱ
16029
ԲԱՆԿԱԿԵՆՏՐԱԼԻՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱԿԱՌՈՒՄ ԵՎ ԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՆԵԿԱԿԱՆ ՎԻՅԵՆՋԻԱ
ՀԵՏԱՋՆՈՒԹՅՈՒՆ
(գործունեության տեսակը)
Տրված է՝ «28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թ.» «Ա.Ռ.Ս. ՇԻՆ» ՍՊԸ 2 ԵՐԵՎԱՆ, ՍԱՐԻԹԱԳ 14 Փ. 26 Տ.
(իջեցե՛ք համարձակել, որպեսզի համարձակված անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունն ու ընտանիքի անունը)
Գործողության ժամկետը՝ ԱՆՃԱՄԿԵՏ
ԴՐ ԲԱՆԿԱԿԵՆՏՐԱԼԻՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
(ստորագրություն) (ստորագրություն)
Կ.Տ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզ, Բ. Աշտարակ, Երևանյան փողոց
թիվ 2/1 հասցեում գտնվող Հայաստան „Սևան“ մարզական
ՀԿ-ի մարզադպրոցի շենքի տեխնիկական վիճակի և նրա
հետակա շահագործման հնարավորության վերաբերյալ:

ՏՆՕՐԵՆ Դ. ԻՇԽԱՆՅԱՆ



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Ա.Ռ.Մ. ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն



Ռ.Իշխանյան
29 07 2017թ.

Եզրակացություն

ՀՀ Արագածոտնի մարզ, Զ. Աշտարակ, Երևանյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող Հայաստան „Սևան“ մարզական ՀԿ-ի մարզադպրոցի շենքի տեխնիկական վիճակի և նրա հետակա շահագործման հնարավորության վերաբերյալ:

Եզրակացությունը կազմված է տեղում շենքի հետազոտության և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցմամբ 28.07.2017թ. հ. 28072017-02-0035 վկայականի և տնօրեն՝ Արմեն Առաքելյանի դիմումի հիման վրա:

Հետազոտությունը իրականացվել է դիտողական և գործիքային եղանակով:

Նշված շինության զննումը կատարվել է ՀՀՇՆ 11-6.02.2006 «Մեյամոկայուն շինարարություն: Նախագծային նորմեր», «Բնակելի հասարակական և արտադրական շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» դրույթների համաձայն:

Մարզադպրոցի շենքը կառուցվել է 1970-ական թթ: Մարզադպրոցի շենքը բաղկացած է երկու մասնաշենքերից: Շինությունները երեք հարկանի են բարդ ուրվագծային հատակագծով, շինության հարկերի բարձրությունը կազմում են 3,5մ: Շինությունները գտնվում են կիսաքանդված վիճակում:


Շենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ ե/բ շրջանակներով և երկայնական և լայնական կրող պատերով: Պատերը ունեն 50սմ հաստություն և իրականացված են տուֆ քարե շարվածքից, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Շինության կոնստրուկտիվ տարրերը ունեն հետևյալ բնութագիրը

Հիմքերը- ժապավենային են, իրականացված է միաձույլ ե/բ-ից;
Բարավորներն- իրականացված են միաձույլ երկաթ- բետոնից;
Սյուները և հեծանները- իրականացված են միաձույլ երկաթ- բետոնից;
Ծածկը- իրականացված է հավաքովի անցքավոր և կողավոր ե/բ ծածկի սալերից:



Նկ-1;



Նկ-2;

Handwritten signature in blue ink.

Հետազոտությունից պարզվեց`

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Երևանյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող մարզադպրոցի շենքը կառուցվել է 1970-ական թթ. Մարզադպրոցի շենքը ներկայումս չի գործում, գտնվում է կիսաքանդված վիճակում; Անձրևաջրերը և ձյան հալոցները անարգել ներթափանցում են շինության կոնստրուկցիաների և հիմնատակի վրա:

Շենքի կրող և ինքնակրող տարրերն ունեն հետևյալ կոնստրուկտիվ լուծումները`-

Հիմքերը - ներկայացնում են իրենցից միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններ 500 x 500 մմ լայնական հատվածքի չափերով: Ժապավեններն ամրանավորված են վերևի և ներքևի գոտիներում 14մմ տրամագծի A500c դասի երկայնական ձողերով: Լայնական ամրանը չորս ճյուղանի է, իրականացված է 8մմ տրամագծի AI դասի ձողերից, տեղադրված է 200մմ քայլով: Հիմքերի տակ իրականացված է 100մմ հաստությամբ B 12.5 դասի խամբարբետոնից նախապատրաստական շերտ: Առկա են ճաքեր և նստվածքային երևույթներ:

Շինության կոնստրուկցիաները երկարատև ենթարկվել են մթնոլորտային ազդեցությունների: Մթնոլորտային տեղումները անարգել թափանցել են կառույցի հիմքերի մեջ, որի հետևանքով հիմնատակերը ենթարկվել են ջրառողողումների, սառնաքայքայման ու հողմնահարման:

Շենքի ներսում հատակի վրա առկա են նստվածքային երևույթներ, բետոնյա մասերը քայքայված և քանդված են: Գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում;

Սյուները -

հրականացված են միաձույլ երկաթբետոնից: 500 սմ x 500 սմ կտրվածքով, որոնք ամրանալորված են 25մմ տրամագծի A500c դասի ամրաններից և 8մմ տրամագծի Ac-1 p.200մմ անուրներից: Սյուների պաշտպանիչ շերտի բացակայության պատճառով մթնոլորտային տեղումները անարգել թափանցել են սյուների ամրանների վրա, որի հետևանքով սյուների ամրանները ենթարկվել են կոռոզիայի: Մեծամասնությամբ գտնվում են քանդված վիճակում: Առկա են ճաքեր և շերտավորումներ, պոկումներ և փոսեր, բետոնի պաշտպանիչ շերտի շերտազատում և ամրանների մերկացում: Գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում:



Նկ-3;



Նկ-4;

Handwritten signature

Հեծանները

- միաձույլ երկաթ-բետոնից են իրականացված: 500սմ x 600սմ կտրվածքով, որոնք ամրանավորված են 22մմ տրամագծի A500c դասի ամրաններից և 8մմ տրամագծի Ac-1 p.100,200մմ անուրներից: Առկա են ճաքեր, ճքվացքներ, բետոնի պաշտպանիչ շերտի շերտազատում և ամրանների մերկացում, որի հետևանքով կոռոզիայի են ենթարկվել ամրանները: Գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում:



Նկ-5;



Նկ-6;

Handwritten signature in blue ink.

Պատերը - շինության պատերը իրարականացված են „Միտիս“ տիպի տուֆ քարերի շարվածքով՝ ցեմենտ-ավազե շաղախի կիրառմամբ, 50սմ կտրվածքով: Ճակատային հատվածները իրականացված են սրբատաշ տուֆ քարերից: Ուղղաձիգ ճաքեր միջնապատերում, պատերի շարվածքի տեղ-տեղ քայքայում և շերտավորում, առանձին մասերի կապերի խախտում: Պատերի շարվածքը զանգվածային քայքայված են: Տանիքի բացակայության պատճառով մթնոլորտային տեղումներից առաջացած ջրերը անարգել ներթափանցել են շինության պատերի երկայնքով, մի շարք տեղերում առաջացնելով ուռած և ամեն բույս փլուզվելու ենթակա հատվածներ: Գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում:



Նկ-7;



Նկ-8;

[Handwritten signature]

Աստիճանները- Իրականացված են հավաքովի ե/բ աստիճաններից; Առկա են ճաքեր, շեղումներ և այլ երևույթներ; Գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում;



Նկ-9;



Նկ-10;

Handwritten signature

Ծածկերը - իրականացված են հավաքովի ե/բ անցքավոր և կողավոր ծածկի սալերից: Տանիքի խիստ անբավարար և բացակայության պատճառով մթնոլորտային տեղումներից առաջացած ջրերը անարգել ներթափանցել են շինության ծածկի վրա՝ առաջացնելով բետոնի շերտավորում, որի հետևանքով մերկացել և ժանգոտվել են ծածկի սալերի ամրանները:



Նկ-11;



Նկ-12;

[Handwritten signature]

Բետոնի փաստացի ամրությունը որոշվել է չքայքայվող մեթոդով (ՈՄ-2) կարծրաչափով: Ընտրական եղանակով ստուգման ենթարկվեց շինության ե/բ միաձույլ կոնստրուկցիաներ - ե/բ միաձույլ սյուների միջին ամրությունը տատանվում է B-5,0 ից B -10 ի սահմաններում:
- ե/բ միաձույլ հեծանների միջին ամրությունը տատանվում է B-5,0 ից B-10 ի սահմաններում:

Մետաղական ամրանների առկայությունը ստուգվեց PS-35 ֆեռոդետեկտորի միջոցով:

Միաձույլ կոնստրուկցիաների ամրությունը չի համապատասխանում գործող նորմաներին:

Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Աշտարակ, Երևանյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող Հայաստան „Սևան“ մարզական ՀԿ-ի մարզադպրոցի շենքի կոնստրուկցիաների տեխնիկական վիճակը գնահատվում է վթարային:

Շենքը վտանգավոր է հետագա շահագործման համար: Մարզադպրոցի շենքի շինությունը հիմնականում դրա վերականգնման-ուժեղացման աշխատանքների կատարումը տնտեսապես աննպատակահարմար է:

Ուստի՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Աշտարակ, Ա. Մելքոնյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող արտադրական շինության կոնստրուկցիաների վնասվածության մակարդակը ըստ գործող շինարարական նորմերի սանդղակի դասվում է 4-րդ (չորրորդ) աստիճանի:

Քանի որ ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Աշտարակ, Երևանյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող Հայաստան „Սևան“ մարզական ՀԿ-ի մարզադպրոցի շենքի կոնստրուկցիաների տեխնիկական վիճակը գնահատվում է վթարային ուստի նպատակահարմար չէ նրա ուժեղացման - վերականգնման աշխատանքները և առաջարկվում է քանդել 1970-ական թթ կառուցված շինությունը և համապատասխան իրավասությամբ օժտված նախագծային կազմակերպության միջոցով մշակել մարզադպրոցի շենքի կառուցման նոր նախագիծ՝ համաձայն պատվիրատուի առաջադրանքի:

Տեխնիկական հետազոտող  Ռ. Իշխանյան: